

ունի Դափակ Խամպըրկայ ըսուածք :  
 Ա ձառականութիւնն ու ձարտա-  
 րութիւնը ետև են մայրաքաղաքիս մէջ ,  
 և գրեթէ իրեն պիտոյիցը համար միայն  
 կը դործածուին : Գործարաններուն  
 մէջ զիմաւորապէս կը շնուին տեսակ  
 տեսակ երեւելի կտաւներ , ինչպէս է  
 պարտիորա ըսուածնը աթել կտաւը , բա-  
 րակաման գուրպաներ , մետաքսեղին ,  
 ցփի , գուղիք , ոգելից ըմպելիքներ և  
 մանաւորապէս ուստի ըսուած օգւոյն  
 համար 2,000 զտարանէ աւելի կայ , որ  
 հնատեղուանքը գինւոյ տեղ կը դործա-  
 ծուի . նմանապէս ընտիր կահկարասիք ,  
 երաժշտութեան գործիքներ , ու գեղե-  
 ցիկ կառքեր՝ որոնց մէծ մասը ուրիշ տե-  
 ղեր կը տարուին : Բայց շատ բանուկ  
 է զրոց վաճառականութիւնը , և տպա-  
 րանները՝ որոնց լաւ կը համնին շրջա-  
 կայ տեղեաց մէջ եղած թղթի գործա-  
 րանները՝ այնչափ շատցած են , որ այս  
 մասին մէջ գրեթէ Լ նոտրայի կը հաս-  
 նի . և ջրանցքներուն ձեռքով լիսակոյի  
 և Ակովտիոյ ուրիշ զիմաւոր քաղաքաց  
 հետ հաղորդակցութիւն ունենալուն՝  
 աւելի կը դիւրանայ այդ վաճառակա-  
 նութիւնը : Հոս արժանի կը սեպենք  
 յիշելու՝ որ այս քաղաքին մէջ ընդար-  
 ձակ տպարան մը ունին Չեմալըս ը-  
 սուած երկու եղաքքը , և միայն իրենց  
 գրուածքները տպել կու տան հնա՝ ա-  
 ռանց ընդհատութեան ժամանակի :  
 Մայրաքաղաքիս տարեկան հասքը 1,  
 150,000 ֆրանգ կը հանեն :

Խամպըրկ շատ երեւելի արանց հայ-  
 րենիք եղած է , ինչպէս են Հիումհըր-  
 շակաւոր պատմաքանն ու փիլսոփայն ,  
 որուն մահարձան մ'ալ կանգնուած է ,  
 Պարգի թարգմանիքը , Ոտպերգործն ,  
 Հեյս , Յոլհաննէս Պլեր ժամանա-  
 կագիրը , և այն : Ճառզովուրդը մաքրա-  
 կան ըսուած նորազանդներէն է , և շատ  
 ծշութեամք կը պահէ իր կրօնին օ-  
 րէնքները , մանաւանդ կիրակի օրերը  
 զարմանալի փոփոխութիւն մը կը տես-  
 նուի հասարակ օրերու գործունէու-  
 թեանը նայելով :

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մասներկական ձգողորին ու մազատեալ և  
 րեսուրսներ :

Մասներկական ձգողութիւնն կ'ըսուի այն  
 զօրութիւնը , որ մէկ մարմնոյ մը մաս-  
 նը կունքը կամ իրարու խիստ շատ մօտ  
 եղած երկու մարմնոց մասնը կունքը իրա-  
 րու յարած կը բռնէ :

Եթէ այս ձգողութիւնը ըլլար ,  
 մարմնոց մասնը կունքը ծանրութեան  
 զօրութեանը չէին կրնար գէմ զնել , ու  
 իրարմէ կը բաժնուելին : Մասնկով մաս-  
 նը կամ ձգողութիւնն է՝ որ հաստա-  
 տուն մարմնոց ուժ կու տայ գէմ կենա-  
 լու շերմութեան ազգեցութեանը , որ  
 շատ զօրաւոր ներգործող է , և մինչեւ  
 մարմնոց մասնը կամ մասնը մէջը կը թափան-  
 ցէ , և միշտ կը նայի որ իրարմէ բաժնէ  
 հեռացընէ , մինչեւ որ հաստատուն մար-  
 մնը հեղանիւթ դառնայ . ինցուան  
 նաև օգատեսակ հօսանիւթ , թէ որ  
 տաքութիւնը բոլորովին յաղթէ :

Մասնը կամ ձգողութիւնը պէտք  
 չէ շփոթել արարալուծահան ձգողութեան  
 կամ բարձրացընեան՝ ձգողութեան հետ :

Այս տեսութեամբ անգործարանա-  
 որ մարմինները կրնանք զանազանէ՝  
 պարզ ու բաշտրէալ : Պարզ մարմիններն  
 են անօնք , որ մէջերնին մէկ գոյացու-  
 թիւն մը միայն կը պարունակեն , որուն  
 մասնը կունքը իրարու հետ միացած են  
 մասնը կամ ձգողութեամբ : Բնդհա-  
 կառական բաղադրեալ մարմինները իրենց  
 մէջ կը պարունակեն երկու կամ շատ  
 այլաբուն գոյացութիւններ . այս գոյա-  
 ցութիւնները տարրալուծաբար իրարու  
 հետ բաղկացած կը մնան : Տարրալուծը  
 ասոնց բաղկացութիւնը կը քննէ , որով  
 հետև այլատեսակ մասնը կանց իրարու  
 մասնաւոր ձգողութեանէն առաջ կու-

գայ . և այս երեսով թը կ'անուանէ բաշ-  
հայութեան չժողութեան կամ դարբաւծա-  
հան յարակյութեան :

Չգիտցուիր թէ մասնըկական ձգո-  
զութեան օրէնքն ինչ է . միայն գիտենք  
որ այս ձգողութիւնը այն ատեն կ'ըլլայ՝  
թէ որ մասնըկունք իրարմէ ամենաքիչ  
հեռաւորութիւն ունենան . և որչափ  
հեռաւորութիւնը նուռազի , այնչափ ա-  
ւելի սաստիի երագութեամբ կ'աճի :

Իւելի յատուկ բառով՝ մասնըկական  
ձգողութիւնը համակարգութիւն՝ կ'անուա-  
նեն բնաբանք , որ մարմնոյ մը համա-  
սես մասնըկունքը իրարու հետ կը միա-  
ցընէ : Կ արունակ աջքերնուս տախն են  
համակցութեան օրինակները . ամէն  
մարմնոյ իր վիճակը պահէն խոկ՝ այս  
ձգողութեան օրինակ մըն է : Այլ և  
այլ մարմնոց նայելով իրեն սաստկու-  
թիւնը կը զանազանուի : Ոմանք , ինչ-  
պէս հաստատուն մարմինները , միշտ  
աւելի կամ նուռազ խիստ կամ ամրա-  
պինդ են : Ոմանք ալ , ինչպէս հեղա-  
նիւթները , շատ աւելի նուռազ ամրա-  
պինդ են . բայց համակցութեան պատ-  
ճառաւան է՝ որ հեղանիւթի կաթիլ մը  
մակարդակի մը վրայ աւելի կամ նուռազ  
ուռած ձեւ կը պահէ , և ինքը կ'արգիլէ  
որ մասնըկունքը՝ ծանրութեան ազգե-  
ցութեանը հպատակելով , մակարդակին  
վրան ամենանուրբ կարգով մը ըստարա-  
ծուին : Միայն կազերուն վրայ համա-  
կցութեան հետք մը չերենար :

Մասնըկական ձգողութեան ազգե-  
ցութիւնը չէ թէ միայն մի և նոյն  
մարմնոյ մասնըկանց մէջ կ'երեայ , հա-  
պա կը տեսնուի նաև երկու այլ և այլ  
մարմնոց մասնըկանցը մէջ , թէ որ մակ-  
երեայթնին իրարու կպած ըլլան : Ուէ  
որ ընդհանրապէս մարմնոց մակերեայթը  
խորութերու ու անհաւասար ըլլար ,  
որով որ իրարու վրայ դրուած ատեննին՝  
համեմատութեամբ խօսելով՝ շատ քիչ  
կէտերով իրարու կը կացին , զիպուա-  
ծով որ իրարու դպչէին՝ այնպիսի ու-  
ժով իրարու կը զուգակցէին , որ գիտու-  
թին կ'ըլլար այն ուժին յաղթելը :

1 Գլ. Cohésion.

Ա ասնըկական ձգողութիւնն որ կը  
հանդիպի երկու այլ և այլ մարմնոց  
մասնիկներուն մէջ , թէ որ մակերեայթը  
նին առերևութաբար իրարու կպած ըլ-  
լան , սովորաբար կ'ըսուի չժողութեան  
զրուակյութեան :

Ե այս ձգողութիւնը կրնայ ունենալ  
հաստատուն մարմնը հաստատուն մար-  
մնոյ հետ , հաստատունը հեղանիւթի  
հետ , հեղանիւթը հեղանիւթի հետ :

Ա . Զուգակցորիթե հաստատուն մարմիննե-  
րու իրարու հետ :

Երկու կապարէ գնտակի երեսէն  
կտրէ . ետքը կտրած մակերեայթներդ  
ուժով իրարու վրայ դիր , միայն նայէ  
որ ասոնց մէջ ամենելին օտար նիւթ  
մը չպահնուի : Ասոնք այնպէս իրարու կը  
զուգակցին , որ իրարմէ բաժնելու հա-  
մար շատ լիարայի ծանրութիւն պէտք  
է : Այս բանը կ'ըլլայ՝ ապակւոյ կամ  
մարմարինի երկու թիթեղ որ գործա-  
ծես , և ընդհանրապէս որ և իցէ ողորկ  
մակերեայթ : Ասկեզօծելը , անագելը ,  
արծաթաղրուագելը <sup>2</sup> մէջմէկ օրինակ  
են մետաղներու իրարու զուգակցու-  
թեանը՝ լաւ մաքրած մակերեայթները  
իրարու կպյունելով :

Դ'արպին երկըթին հետ ունեցած  
զուգակցութիւնը այս տեսակ ձգողու-  
թեան շատ լաւ օրինակ է : Շիգդէ  
բնաբանը երկու երկըթէ գլան առաւ՝  
2 ըթաշափի տրամագծով , և խարիսխ-  
նին լաւ մը ողորկեց ու իրարու յարեց՝  
երկուքին մէջտեղը ամենաբարակ կարդ  
մը ձարագ քսելով : Այս երկու զլաննե-  
րը իրարմէ բաժնելու համար 1470 լի-  
արայի ուժ պէտք եղաւ , քանի որ ջեր-  
մաշափը զրոյի վրան եր . բայց զրոյէն 3  
աստիճան վար՝ 2000 լիարայի ուժ : —  
Խսկ ձարագի նոյն տրամագծով զլանի մը  
համակցութիւնը յատուկ գործիքով մը  
չափելով՝ 50 լիարայէն վեր չելաւ :

( Ա Հ Ե Ր ՈՒ Խ Ա Կ Ո Ւ Ք )

1 Գլ. Adhésion.

2 Գլ. Plaquer.